

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ԱՆՆԱ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետ
ակադ. Հրանտ Թամրազյանի անվան
հայ գրականության պատմության ամբիոնի ասպիրանտ

ՀԵՂԻՆԱԿԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԿԱՖԱՆԵՐՈՒՄ

***Բանալի բառեր** - Կաֆա, Գրիգոր Մագիստրոս, Չաքարիա Գուլ-
նեցի, Ժողովրդական ստեղծագործություն, հայրեն, Ֆրիկ, Պղնձե քա-
ղաքի պատմություն, քրիստոնեական բարոյախոսություն*

10-րդ դարից սկսած՝ հայ քնարերգության մեջ կաֆայի կիրառմամբ ընդգծուն դարձավ միջնադարյան հեղինակի վերաբերմունքը ոչ քրիստոնեական պատմությունների վերաբերյալ նաև՝ ցույց տալով անհատական-ստեղծագործական նոր հնարավորություններ:

Գրիգոր Մագիստրոսը «Հազարտողեան առ Մանուչէ» չափածո երկում ներկայացնում է Սուրբ Գիրքը չափածո դարձնելու շարժառիթները, և այստեղ կիրառում «Կափա» եզրույթը¹, որի բանաստեղծական չափը նույնանում է հայրենի չափին: Հասմիկ Սիմոնյանը գրում է. «Կաֆան հայ գրական աշխարհում տիրող նախնական պատկերացմամբ հիմնականում առնչվել է հանգի գաղափարի հետ, նշանակել է «նույնահանգ» բանաստեղծություն»²: Կաֆայի կարևորագույն գործառույթը արձակ բնագրերի գաղափարների չափածո վերարծարծումն է: Այն ածանցվում է որևէ պատմության, որի բովանդակությունը նպաստում է չափածո հատվածների սահուն իրացմանը, իսկ հեղինակի վերաբերմունքը առավելապես դր-

¹ Տե՛ս Տաղասացութիւնք **Գրիգորի Մագիստրոսի Պահլաւունայ**, Ի. Վենետիկ, 1868, էջ III:

² **Հ. Սիմոնյան**, Հայ միջնադարյան կաֆաներ, Երևան, 1975, էջ 34:

սևորվում է թեմայի կամ արտահայտած հիմնական գաղափարի շուրջ կատարած դատումներում: Այս առումով կաֆայի ժանրը կարելի է համարել հեղինակի միտումների ու նպատակների արտահայտման լիարժեք «տիրույթ»:

Հայ կաֆայագիր հեղինակներ Ֆրիկը, Խաչատուր Կեչառեցին, Գրիգորիս Աղթամարցին, Չաքարիա Գնունեցին, Հովասափ Սեբաստացին կաֆաներ են գրել կամ թարգմանել հետևյալ պատմությունների վերաբերյալ. 1. «Ալեքսանդր Մակեդոնացու պատմություն», 2. «Պղնձե քաղաքի պատմություն», 3. «Փահլուլ թագավորի պատմություն», 4. «Մանկան և աղջկա պատմություն», 5. «Ֆարման մանկան պատմություն», 6. «Հայոց թագավորի պատմություն»:

1. Ալեքսանդր Մակեդոնացու պատմության կաֆաները:

Ալեքսանդր Մակեդոնացու պատմության կաֆաների զգալի մասի հեղինակ է համարվում Ֆրիկը, որի տաղերի գաղափարական ընդգրկումները, երբեմն առանց բառապատկերային փոփոխությունների, արտահայտված են նաև կաֆաներում: Հեղինակի տաղերի և կաֆաների համեմատական ուսումնասիրություն է կատարել Աշոտ Հովհաննիսյանը. ««Ընդդեմ ֆալսքին» բանաստեղծության մի շարք բեյթերը մուտք գործեցին միջնադարյան հայ կլասիկ թարգմանություններից մեկի՝ Ալեքսանդր Մակեդոնացու պատմության կաֆաների մեջ: Այսպես՝ անդրադառնալով Դարեհ արքայի չարակրություններին՝ այդ կաֆաների շարքում հանդիպում ենք այսպիսի տողեր...»³: Աշոտ Հովհաննիսյանը մեջբերում է Ֆրիկի «Ընդդեմ ֆալսքին» բանաստեղծությունը և Ալեքսանդր Մակեդոնացու պատմության կաֆաներից մեկը. Յորժամ չարիսն ի յետ քակի // Ու ծըգէ ի յաչքն խոլոր // Ոչ գաւրք և ոչ հեծել աւզնէ, // Ոչ հարիւր հազար ծիւղոր: Կաֆան համեմատվում է հետևյալ բանաստեղծական հատվածի հետ. Է՛ չարիս, ես քեզ ո՞նց աւտամ // Երբ չունես զոչ ոք մաւտաւոր, // Ոչ դաւլ, ոչ երդում ունիս // Չի քո սիրտն է խիստ նենգաւոր⁴: Ֆրիկի կիրառած ժանրային զուգահեռումներում նույն գաղափարների իրացումը մեկնաբանելի է. նա խնդիրը «գանգատաբար» արդեն ներկայացրել է տաղերում, ընթերցողը ծանոթ է խնդրին, իսկ կաֆան, կարծես, ևս մեկ «առիթ» է նույն պնդումը արծարծելու կաֆայագրին հատուկ կերպով՝ խրատաբար: Հեղինակի «Էյ, չարիս» տաղի 117 տողերից 40-ը Ալեքսանդր

³ Աշոտ Հովհաննիսյան, Ֆրիկը պատմաքննական լույսի տակ, Երևան, 1955, էջ 101-102:

⁴ Աշոտ Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 102:

Մակեդոնացու պատմության մեջ օգտագործվել են իբրև կաֆաներ: Հ. Սիմոնյանը գրում է. «Քննությունը ցույց է տալիս, որ Ֆրիկի կողմից նախապես ստեղծվել է մի ինքնուրույն բանաստեղծական երկ՝ միասնական հանգավորմամբ («որ» հանգով) և տրամաբանական կառուցվածքով, որի որոշ տներ հետագայում արդեն ներմուծվելով Ալեքսանդրի պատմություն, ստացել են նոր կիրառություն»⁵:

Հեղինակային ազատ մոտեցմամբ առանձնանում են Խաչատուր Կեչառեցու կաֆաները: Հեղինակը խոսում է հերոսի հետ, սակայն խրատն ուղղված է ընթերցողին. Մարմինն է ի խոտ նըման // Ու ծաղկի, Դաւիթ, վրկայեց, // Եւ փուք է քամուլ նըման // Յոբ ասաց 'Է Ելիփազ գըրեց: // Սողոմոն ըստուէր ասաց, // Եսայի նոյնպէս գուշակեց. // Սքանդար դու քեզ պէտ արա՛, // Չի արիւնն ոչ ով չըմարսեց...⁶:

Շատ հաճախ հեղինակները նախընտրում են գործուն դեր ունենալ կաֆաներում՝ հանդես գալով իբրև խրատատու-ուսուցանող: Ուշագրավ երևույթներից է հեղինակ-գործող կերպարի ներկայությունը: Չաքարիա Գնունեցին գրուցում է սիրելի հերոսի հետ⁷. Սքանդար դու ինձ հաւատայ, // քեզ կապեր եմ շիրիս շարբաթ, // Շամրաս ծաղիկ եւ քրքումս, // Եւ եղեգնախունկ նարդոսաց, // Հիրիկ կինամոն չըքնաղ, // Եւ զըմուռն ընդ խալուէս խամնած, // Ըմպէ թագաւոր անվախ, // փարատե՛ գցաւքս Տեր Աստուած⁸: Հեղինակի կաֆաներում խիստ բնեռացված չէ միայն դրական կերպարներին ներկայացնելու միտումը, հիմնական շարժառիթը ընթերցողին օրինակով ուսուցանելն է. Պովրո՛ս, դու յետ մի՛ դառնալ, // Մի՛ արեանըդ քո տիրանալ, // Մի՛ զքո աչքդ ի գաւրքըն տալ, // Մի՛ զբաղիլ խաւսաւք ի գընալ: // Ներհակդ առաջի քո կայ,

⁵ Հ. Սիմոնյան, նշվ. Աշխ., էջ 88:

⁶ **Խաչատուր Կեչառեցի**, Տաղեր, աշխատասիրությամբ՝ Ա. Դյուլխանյանի, Երևան, 1988, էջ 66:

⁷ Էդդա Վարդանյանը գտնում է, որ Հայաստանում Ալեքսանդր Մակեդոնացու կերպարը սիրելի էր, քանի որ հանդես է եկել քաղաքական ծանր իրավիճակներում երկրի պաշտպանի դերում: Ալեքսանդր Մակեդոնացին հզոր միապետի կերպար է, ով ոգևորել է մարդկանց, և պետականությունը վերականգնելու հույսեր ներշնչել: Տե՛ս **Edda Vardanyan**, Alexandre le Grand à la lumière des manuscrits et des premiers imprimés en Europe (XII^e- XVI^e siècle), "La portée politique de l'illustration des manuscrits du Roman d'Alexandre arménien", Belgium, 2015, pp. 247-249.

file:///C:/Users/VG/Downloads/La_portee_politique_de_l_illustration_de.pdf

⁸ **Չաքարիա եպիսկոպոս Գնունեաց** եւ իւր տաղերը, Ուսումնասիրեց եւ իրատարակեց Հ. Ներսէ Ակինեան, Վիեննա, 1910, էջ 63:

// Դու ջանա՛յ կրռուով զդա որսալ, // Թէ ոչ՝ քեզ հանց խոց դը-
նէ, // Որ ըզքո մայրն առնէ ի լալ⁹:

Ալեքսանդր Մակեդոնացու պատմության կաֆաների հե-
ղինակային առանձնահատկություններից կարելի է մասնա-
վորել այն հանգամանքը, որ գրողական մեծ հմտությամբ ոչ
քրիստոնյա կերպարի միջոցով քրիստոնեական բարոյախո-
սությունը հասանելի է դառնում ընթերցողին: Քանի որ կեր-
պարի ազդեցունակությունն ու ընթերցողների շրջանում նրա
մասին արձակ գործերի ընթերցումը տարածված էր, հեղի-
նակները փորձել են գտնել լավագույն լուծումը. հեթանոս հե-
րոսի արժանիքները բարձրացնել քրիստոնեական բարոյա-
խոսության միջոցով, ընթերցողին սնել, խրատել սուրբգրա-
յին կանոններով: Ըստ էության, նման մոտեցումը ընդհանուր
սկզբունք է համարվել բոլոր կաֆայագիրների համար:

2. Խոհափիլիսոփայական կաֆաներ:

Մարդու միայնության, աշխարհի ունայնության, ազա-
տության, աշխարհիկ թեմաների շուրջ փիլիսոփայական
խորհրդածությունները առավելապես արտահայտված են
Պղնձե քաղաքի, Փահլուլ թագավորի, Ֆարման մանկան
պատմությունների կաֆաներում, Հովասափ Սեբաստացու
«Աշխարհիս սահմանն է հանց» տողերով սկսվող կաֆայա-
շարքում: Հեղինակն ընթերցողին հուշում է հարցեր, որոնց
պատասխանները գտնելու են Մեծ հավերժին ձգտող, ար-
թուն մնացած հավատավորները: Կաֆայաշարքի տրամա-
բանական ընթացքը զարգանում է այս ուղղությամբ. Աշխար-
հիս սահմանն է հանց. // Կու խաբէ գմարդն ի լման.// Միտք ա-
րայ և գիտացիր, // Ո՞ւստ եկին և ո՞ւր կու գնան.// Խիստ նեղ
և բարակ կարմունջ // Եւ ներքոյ՝ զետ ծով կու ծփան. // Չետ
կուր նշգահեն զջուրն, // Եւ խփեր են գաջքն ու կու գան¹⁰:

Հայ միջնադարյան քնարերգության ուսումնասիրողներից
Արիստակես Տևկանցը գտնում է, որ Պղնձե քաղաքի պատ-
մությունը հայերեն է թարգմանել Գրիգորիս Աղթամարցին՝
Նկատի առնելով նրա ստեղծած այլ կաֆաների ոճական ընդ-
հանրությունները¹¹: Սակայն ուսումնասիրություններից պարզ-
վում է, որ այս պատմությունը թարգմանված է եղել ավելի

⁹ Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացոյ, Աշխատասիրությամբ՝ Հասմիկ Սիմոնյանի, Երևան, 1989, էջ 274:

¹⁰ **Հովասափ Սեբաստացի**, Բանաստեղծություններ, աշխատասիրությամբ՝ Վ. Գևորգյանի, Երևան, 1964, էջ 132-133:

¹¹ Տե՛ս **Ար. Տևկանց**, Հայերգ, Թիֆլիս, 1882, էջ ԾԸ:

վաղ՝ Գրիգորիս Աղթամարցու ապրած ժամանակից երկու դար առաջ՝ Դավիթ Կուրապաղատի հրամանով¹²: Իսկ Հ. Չիթունին գտնում է, որ ընդհանրությունը շատ մեծ է Պղնձե քաղաքի պատմության կաֆաների և Նահապետ Քուչակին վերագրվող հայրենների միջև. «Ու՞ր կարդացեր էի ես այդ տոհմիկ շունչ ու քայլ ունեցող տողերուն նման ուրիշ քերթուածներ... Նահապետ Քուչակ՛կը... Միեւնոյն գրիչն է Քուչակին ու Պղնձե Քաղքին մէջ, գրեթէ...»¹³: Ներկայացնենք Հ. Չիթունու հրատարակած Պղնձե քաղաքի պատմության կաֆաներից. Է՛ մարդ Աղամայորդիք, դուք բերեք գ՛ խելքերդ ի վերայ.// Մտօք իմացիք գ՛տուտ կեանքս ու գ՛մահու գալն ի վերայ.// Չի քակե գ՛ամէն շինուածք. որ շինու Տերն՝ ոչ իմանայ. //Մեզ կայ պատասխան տալու, ամենի որ մէկ մի չը մնայ¹⁴:

Կաֆաների և հայրենների ընդհանրությունները կարելի է պայմանավորել խոհափիլիսոփայական նույն թեմաների արծարծման, բանաստեղծական նույն չափի կիրառման, ժողովրդական մտածողությանը հարազատ մնալու հանգամանքներով: Ուշագրավ է, որ խոհափիլիսոփայական հայրեններում սուրբգրային կանոնի կիրառումը, աստվածաշնչյան մեջբերումները առատ են ոչ այնքան, որքան կաֆաներում: Կաֆայագիրը «չի մոռանում» արևելյան գեղեցիկ թեմա արծարծող պատմության հնարավոր «վտանգների» մասին, և կաֆաների միջոցով քրիստոնյա ընթերցողին հիշեցնում է ավետարանական խրատը. Գերի աղամայ որդի // Չամէն եր դատիս հետ մեղա՛ց. // Յիշեայ գանաչառ ատեանն // Ու ծեծէ սրտիկդ ու դու լա՛ց. // Չիս տես ու քեզ ճար արայ // Ու խափան կացիր մեղա՛ց // Թէ չէ յաներեկ աւուրն// Տի այրիս ի հուրն որ անա՛նց¹⁵: Արշակ Չոպանյանի հրատարակած Փարիզի Ազգային Մատենադարանի թիվ 308 ձեռագրի՝ Պղնձե քաղաքի պատմության գրեթէ բոլոր կաֆաներում կյանքի անցողիկության թեման զուգորդվում է աստվածաշնչյան խրատին. Խըրատ մի լըսես յինէն, ա՛յ յիմար խելօք դու տըխ-

¹² «Հանդես ամսօրեայ» ամսագրում **Ն. Ակինյանը** հրատարակում է պատմությունը, որն ունի հետևյալ վերնագիրը՝ «Չրոյց և խաւք առաջի թագաւորացն և իշխանացն, զոր թարքմանեցին Դավիթ Կուրապաղատին ի հայ լեզու ի տաճիկ լեզուէ», Տե՛ս «Հանդես ամսօրեայ», Վիեննա, 1958, N1-4, Յունուար-Ապրիլ, էջ 25, 30:

¹³ Տե՛ս **Չիթունի**, Պղնձե քաղաքի պատմութիւն, Կ. Պոլիս, 1919, էջ 7:

¹⁴ **Չիթունի**, նշվ. աշխ., էջ 35:

¹⁵ ՄՄ ձեռ. N 6185, թերթ 44 ա:

մար, // Գիտեմ մեռանիլ պիտի որ չըկայ յաշխարհս իսկի ճար. // Ըզքո սիրտ ըղորդ պահե թե ի քո յագգըն՝ Լ ի յօտար, // Ի պահք՝ Լ ի աղօթք կացիր զի տապանն է մուկ ու խաւար¹⁶:

Եթե Պղնձե քաղաքի պատմության կաֆաների բովանդակային-գաղափարական հիմքը բխում է բուն պատմությունից, որոշակիորեն լրացնում է այդ պատմությանը, ապա Փահլուլ թագավորի պատմության կաֆաների խրատական բնույթը պայմանավորված չէ արձակ պատմության բուն նպատակադրումից: Կաֆայագիրը ազատորեն խոսել է իրեն հետաքրքրող խոհափիլիսոփայական թեմաներից. Եթե շատ զրկիցես և եթե սակաւ, և վայելեսցես զերկիր ինդալով, // Զեզ չիք հնար, հարկ է աստի երթալ և ըզմարմինդ ծածկել ընդ հողով, // Դարձիր և զբարիս գործեա՛, զի՛տ վաղվադակի բժիշկ և դեղ, // Չի մի՛ յահաւոր ատենին մեծի ահիւ և ամօթով լինիցի¹⁷: Այս կաֆաների հեղինակային պատկանելության հարցը առկախ է: Բ. Չուգասոյանը համեմատում է Ֆրիկի ստեղծագործությունները և կատարած թարգմանությունները, փաստում նրա՝ պարսկերենին տիրապետելը՝ ապացուցելով, որ պարսկական մի քառյակի հեղինակն է և այս կաֆաների հեղինակային ոճը խիստ նման է նրա գրողական ոճին¹⁸:

Ազատ մարդու, հերոսի կերպար է Ֆարմանը՝ համանուն պատմության հերոսը: Այս պատմության մեջ իշխող է աշխարհիկ կյանքը՝ ամենատարբեր դրսևորումներով, իսկ կաֆայագիրների գործերում շեշտված է ազատության գաղափարը: Ֆարման մանկան պատմությունը վերագրվել է Հովասափ Սեբաստացուն, Առաքել Բաղիշեցուն, Հակոբ Արծկեցուն: Ն. Անդրանիկյանը ընդհանրություններ է գտնում նաև Կոստանդին Երզնկացու ստեղծագործությունների և այս երկի լեզվի, ոճի, գաղափարական շեշտադրումների միջև: Հեղինակը գտնում է, որ եթե Կոստանդին Երզնկացին այս երկի հեղինակը չէ, ապա թարգմանիչն է¹⁹: Հետագայում հերքում

¹⁶ Արշակ Զօպանեան, Հայ էջեր, Փարիզ, 1912, էջ 88:

¹⁷ «Պատմութիւն յաղագս Փահլուլ թագաւորին», Պատմութիւն վասն մանկանն եւ աղջկանն, Պատմութիւն յաղագս Փահլուլ թագաւորին, Աշխատասիրութեամբ՝ Արմենուհի Սրապյանի, Երևան, 1983, էջ 156:

¹⁸ Տե՛ս Բ. Չուգասոյան, Ֆրիկը պարսկերեն քառյակի թարգմանիչ, «Բանբեր մատենադարանի», Երևան, 1958, N 4, էջ 111-122:

¹⁹ Տե՛ս Ն. Անդրանիկյան, Ազգային վեպերէն. 1-Պղնձե քաղաքը.- 2. Ֆարմանի Ամանի.- 3. Հարցմունք աղջկան, «Բազմավեպ», Վենետիկ, 1906 թ., N 7, էջ 301:

Ե իր տեսակետը: Շ. Նազարյանը որոշ ընդհանրություններ է տեսնում այս պոեմի և Հովհաննես Թլկուրանցու, Մկրտիչ Նաղաշի և այլ տաղերգուների երկերի միջև, սակայն եզրակացնում է, որ ոչ մի բանաստեղծի չենք կարող համարել «Պատմութիւն Ֆարման մանկանն» պոեմի հեղինակ²⁰: Այս պատմության հետևյալ կաֆան պարզ է դարձնում հեղինակային պատկանելության որոշման երկընտրանքի պատճառը՝ ոճական նմանությունները. Տեսնու Ֆարման գևա, ասէ, թէ. -Երնէկ, // Հոգի հոգոյս ու աչերուս ինձ յոյս երեկ. // Արեգական սուրաթ գիշեր ու ցերեկ, // Համբուրեց ու ասաց.-Աչերուս երնէկ²¹: Տարակարծությունը կարելի է պայմանավորել այն հանգամանքով, որ ուշ շրջանի հեղինակները հավատարիմ են մնացել կաֆաների բառապատկերային, ոճական համակարգի նախապես կիրառած սկզբունքներին, ինչպես Նույն երևույթն առկա է ուշմիջնադարյան տաղերգուներից շատերի դեպքում: Վերջիններս կիրառում են բառապատկերային այն համակարգը, ոճական այն յուրահատկությունները, որոնք բնորոշ էին, օրինակ, 13-րդ դարի տաղերգությանը, որքան էլ այդ կաղապարները այլևս կենսական չլինեին իրենց ժամանակաշրջանի համար:

3. Ժողովրդական մտածողության և բանահյուսական կայուն կաղապարների կիրառությունը կաֆաներում:

Ինչպես հայրենը, կաֆան ևս համարվում է ժողովրդական ստեղծագործություն: Կաֆաները աշխարհիկ արձակ պատմությունների չափածո դրսևորումներ են, այդ պատճառով վիպականությունը հիմնական դեր ունի նրանցում: Հատկապես զգալի են կաֆայի, հայրենի, ժողովրդական երգերի փոխհարաբերությունն ու նմանությունը արտահայտման կերպի, բառապաշարի, տաղաչափական ընդհանրությունների առումով: Եվ այստեղ է, որ ընդգծվում են կաֆայագրի միտումները. հարազատ մնալ ժողովրդական մտածողությանը, քանի որ օտարածին տեքստը «վտանգավոր» կարող է լինել քրիստոնյա ընթերցողի համար:

Ժողովրդական երգերի ոճական նմանությունը զգալի է Չաքարիա Գևուկեցու խմբագրած կաֆաներից մեկում. Այս

²⁰ Տե՛ս Պատմութիւն Ֆարման մանկանն (Միջնադարյան պոեմ), հրատարակության պատրաստեց Շուշանիկ Նազարյան, Երևան, 1957, էջ 23:

²¹ Նույն տեղում, 158-159:

չէ ծառայ, քան թէ՛ պարսիկ, // Յետոյ անցել գաղտիգողիկ, // Առել կացնակ ըզպողպատիկ, // Կամեր հարուկ զարքայն բը-
նիկ: // Բայց ոչ կարաց հարուկ սաստիկ, // Այլ հիացմամբ առ-
ներ մըտիկ, // Չխաւսից նորա լըսեր քաղցրիկ, // Չինքն
աւաղէր խուժադուժիկ²²: Նույնպիսի օրինակներ են առկա
Նաև Գրիգորիս Աղթամարցու կաֆաներում. Մարդ որ գայ ի
յայս տեղիս // Թող զմեզ լայ ինքըն խրատի// Որ մենք ի մեր
շատ իրացս // Ենք բաժան ողորմ ու լալի: Կամ ...Այ իմ պա-
տուական դըշխոյ, // Որ դու ես ողորմ ու լալի. // Այս քո անի-
հուն բարիքս, // Չօգնեցին քեզ մեկ մի վշտի²³:

Հեքիաթի ժանրը ևս մեծ ազդեցություն ունի կաֆանե-
րում: Բանահյուսական հիմք ունեն Մանկան և աղջկա պատ-
մության կաֆաները, որոնց հեղինակային պատկանելությունն
անհայտ է: Այս պատմությունը թարգմանվել է արաբերենից,
համեմատվել «Հազար ու մի գիշեր» հեքիաթաշարի պատ-
մություններից մեկի՝ «Տավեդդուտ»-ի հետ²⁴: Պատմությունը
առանձնանում է ժանրային դրսևորումով. ներկայացված է
հանելուկի միջոցով՝ հարց ու պատասխանի ձևով, իսկ կա-
ֆաների հիմքը հեքիաթն է: Թագավորի դուստրը կաֆա է ծո-
նում սիրելիին. Ես խի՛ստ կու սիրեմ գքե՛զ. // վանց սիրո՛յ ես
առ քեզ ե՛կի.// Քեզ բազում խելա՛թ պիտե՛ր. // Աչերու՛տ սիր-
տըս կու այրի:// Ուրախ կեցիր զանց սըրտիս,// Որպէս ըզքեզ
սիրեցի.// Եվ այլ մի գատեր քենէ.// Թէ չէ ինձ մեռնիլ կու հաս-
նի²⁵: Մանուկը պատասխանում է աղջկան. Հայիմ ողորմու
սիրուն.// Չետ հարբած եղա՛ քո սիրուն.// ասի թէ այս ինչ բան
է պէկուման //ինձ լոյս կու ծագէ: // Իմ սիրտըս կըրակ լըցիր.
// Քո գալովըդ զիս լափեցիր. // արեկ թէ խոցեալ ես դու. //լուս
էիր առ մեզ ծագեցիր²⁶:

Միջնադարյան սիրո պատմությունների բանահյուսական
հայտնի մոտիվները ևս գործուն են կաֆաներում: Քրիստո-
նյայի և մուսուլմանի՝ Հովհաննեսի և Աշայի սիրո պատմու-
թյունը ներկայացված է նաև կաֆաներում: «Այս ի՞նչ կրակ

²² Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացոյ, Աշխատասիրութեամբ՝ Հաս-
միկ Սիմոնյանի, Երևան, 1989, էջ 203:

²³ Գ. Հովսեփեան, Գրիգորիս Աղթամարցի (Գրական-կենսագրական նոր
նկարներով), «Արարատ», ԾԲ տարի, Յունուար-դեկտեմբեր, Ս. Էջմիածին,
1919, էջ 20, 33:

²⁴ Տե՛ս Ա. Զոպանյան, Հայ էջեր, Փարիզ, 1912, էջ LC:

²⁵ ՄՄ, ձեռ. N 6451, թերթ 182 ա:

²⁶ Նույն տեղում:

եր՝ զիս այրեց» տողով սկսվող երգում առկա են բառ-պատկերներ, որոնք տարածված են տաղերում, հայրեններում՝ ստեղծելով կայուն սյուժետային կաղապարների անխախտ կիրառման տպավորություն. Մեկ մի հեծեր պօզ պետաւի, // Եկաւ, անցաւ քաջ մուհալի...// Սէն Յովհաննէս -քէշիշ օղի, // Զիրար սիրենք խօշ կու լինի...²⁷: Նույն ժողովրդական տաղում հեղինակը գրում է. Բռնեց ըզպօզ ձիուն ազին, // Կաֆայ ասաց ամէն ճարին...²⁸: Այս ժողովրդական երգը վերագրվել է Հովհաննէս Երզնկացուն, նաև՝ Հովհաննէս Թլկուրանցուն: Աս. Մնացականյանը, ուսումնասիրելով այս թեմայի ժանրաբովանդակային պատմությունը, ներկայացնում է նաև համանման թեմայով գրված հեքիաթը²⁹: Ընդ որում, հեքիաթի մեջ ևս ներառված են կաֆաներ, որոնք պահպանվել են «Մոնթ» վերնագրով: Աս. Մնացականյանը ենթադրում է, որ չափածո ստեղծագործությունը գրվել է «Անապատի մոնթ» պոեմի հիմքով. «Միջնադարում եղել է մի գրույց՝ նվիրված Հովհաննէսի և Աշայի (Սալչուն Փաշայի) սիրո պատմությանը»³⁰: Սալչուն Փաշա կերպար կա նաև հեքիաթներում: Հովհաննէսի և Աշայի սիրո պատմությունը ներկայացնող «Անապատի մարդու սեր» վերնագրով երգում կարդում ենք հեքիաթի ժանրին բնորոշ սկիզբ. Մեկ պըզտիկ մարդըմ կեր, // Անապատայ վանք կը մըներ, // Օր կորեկէ հաց մի կուտեր, // Աղքատներաց բաժին կհաներ³¹: Այս երգում շեշտված է նաև մի երևույթ, որ բնորոշ է հայրենների սիրահարին: «Սիրո տեր դարձած» հերոսը մոռանում է կրթության, հավատի մասին. Կըտոր մի տեղ որ գընաց՝// Սաղմոսարան գըլորեց.//Կըտոր մի տեղ որ գընաց՝// Աւետարան էլ թողեց. //Կըտոր մի տեղ որ գընաց՝//«Խար-մեղէն» էլ հետ մոռցաւ, // Կանոն, սաղմոս, շարական, //Խաչ, աւետարան էլ մոռցաւ...³²: Տաղերգության մեջ ևս ծանոթ է այս մոտիվը. Մարդ որ սիրու կու հանդիպի, // Նայ քան ըզկրակ կու լինի վառ, // Այլ ոչ աղօթք միտքըն կու գայ, // Ոչ յայսմաւուր կարդայ և ճառ³³:

²⁷ Աս., Մնացականյան, Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, Եր., 1956, էջ 184-185:

²⁸ Նույն տեղում, էջ 188:

²⁹ Տե՛ս Աս., Մնացականյան, նշվ. աշխ., էջ 191-195:

³⁰ Նույն տեղում, էջ 517:

^{31, 32} Նույն տեղում, էջ 199:

³³ Հովհաննէս Թլկուրանցի, Տաղեր, աշխատասիրությամբ՝ Էմ. Պիվագյանի, Երևան, 1960, էջ 160, 161:

Բանահյուսական շերտին բնորոշ պատկերակերտման ու դրա խորհրդանշական ընկալման տարրեր են առկա Չաքարիա Գևուհեցու, Խաչատուր Կեչառեցու՝ Ալեքսանդրի պատմության կաֆաներում. Ա՛յ ձի, գքեզ գովել կամիմ, // ցլագլուխ ծընունդ ծովային, // Բաշըդ հըրեղեն է քոյ, // լանջք ու մեջքդ յառեւծ նըմանին, // Սըմբակդ յաւրինակ կազմած, // հանց ուժեղ զինչ ուշկապարին. // Երանի տամ այն բախտին, // որ տաբրաւք քոյով յորդորին³⁴: Կամ Ա՛յ ձի, գքեզ գովել կամիմ, // Տըլայգըլուխ ծնունդ ծովային, // Բաշըդ հրեղեն է քո, // Լանջդ և մեջքդ է քո առիւծին³⁵: Հայկական այլ աղբյուրներում ևս Ալեքսանդր Մակեդոնացու ձին «գուարակագլուխ» է անվանվել³⁶ և բանահյուսական ամբողջ խորհրդաբանությամբ էլ ներկայացված է հայկական կաֆաներում: Քրիստոնյա կաֆայագիրները հարազատ են մնացել բանահյուսական ավանդներին և արձակ պատմության չափածո տարբերակում Նույնպես զգալի է Ժողովրդական մտածողությունը. Քան զամպն արևուն պայծառ // 'Լ ի լուսոյ աստեղ նըմանես. // Քան ըգծովային ծընունդ // յնդամայ որդիս աստար ես, // Բայց մեծ մին դալատ կա քեզ, // որ միայն մեծ ըգքեզ կուզես. // Բայց թե հանց ցաւոց դիպնուս // շատ եղուկ ու վայ տաս դու քեզ³⁷:

Այսպիսով՝ միջնադարյան քնարերգուն (տաղերգու, հայրեններգակ, կաֆայագիր) հստակ առանձնացրել է ստեղծագործական անցում-բաժանումներ: Եթե տեքստը աշխարհիկ բնույթ ունի, պատմական կերպարների մասին է, օտար երկրների հերոսական պատմություններ են, գրվում են այդ պատմությունների չափածո տարբերակները՝ կաֆաները, որոնք օտար աղբյուրներում արդեն իրացված և հարազատ դարձած բանաստեղծական տեսակ են: Եվ այս դեպքում հեղինակի վերաբերմունքը ընդգծվում է սուրբգրային և աշխարհիկ տեքստի «տեղավորումը» չափածո տարբերակով

³⁴Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացոյ, էջ 94:

³⁵ **Խաչատուր Կեչառեցի**, Տաղեր, Աշխատասիրությամբ՝ Ա. Դյուլխանյանի, Երևան, 1988, էջ 49:

³⁶ Արամ Թովչյանը ներկայացնում է հայկական աղբյուրները և հեղինակների (Գրիգոր Մագիստրոս, Մխիթար Գոշ, Խաչատուր Կեչառեցի), ովքեր ծանոթ են Բուկեփալոս ձիու «գուարակագլուխ» բանահյուսական անվանմանը: Տե՛ս **Արամ Թովչյան**, «Ալեքսանդրի վեպի» հին հայերեն թարգմանության բնագիրը և ազդեցությունը հայ միջնադարյան գրականության վրա, «Բանբեր Մատենադարանի», թիվ 27, Երևան, 2019, էջ 23:

³⁷ Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացոյ, էջ 139:

Ներկայացնելիս: Կաֆաներում խիստ արտահայտված է ընթերցողին սովորեցնելու, խրատելու հեղինակի նպատակամղվածությունը: Այս նկատառումը խոսում է կաֆայագիր հեղինակի՝ որպես խրատատու-ուսուցանողի կարևոր հանձնառության մասին: Շատ հաճախ ստեղծագործելու խնդիրը երկրորդվում է Նյուլթը վերաշարադրելու խնդրին: Թվում է՝ միջնադարյան քնարերգությունը, լայն առումով, սուրբգրային տեքստի իրացում է, սակայն, օրինակ՝ տաղերում բանաստեղծական մտքի, բանաստեղծաբար ասելու գերակայությունն է կարևորված: Նյուլթը՝ ավետարանական տեքստը, փառաբանվում է հեղինակի շնորհիվ, միևնդեռ կաֆաներում Նյուլթը՝ հեքիաթային, խրատական պատմությունը, հեղինակի միջոցով ներկայացվում է: Նույն հեղինակի դեպքում առաջանում է քնարերգու ստեղծող և քնարերգու ներկայացնող հակադրությունը, ընդ որում՝ կաֆայագիր հեղինակը, հակակշռելով կիսաառասպելական պատմությանն ու աշխարհիկ կերպարներին, փորձել է հնարավորինս պահպանել սուրբգրային կանոնի գերակայությունը:

ANNA STEPANYAN - THE PROBLEM OF THE AUTHOR'S POSITION IN THE ARMENIAN MEDIEVAL CAFES - One of the poetic types used in the medieval Armenian lyrics is the Kafa, created in the 10th century, polished and reached artistic development in the 13th century and used until the 16th century. Armenian writers-Frick, Khachatur Kecharetsi, Grigoris Akhtamartsi, Zakaria Gnunetsi, Ovasap Sebastatsi. The central theme of the works of Kafaagir authors is life in various manifestations, the struggle for secular life, the broad impulses brought by it, the problems that bother medieval people are theological, philosophical. And these manifestations are represented by individual creative author's and genre characters accepted at this stage. Armenian Kafaists very often freely chose which evangelical image could be represented with this story, which sacred rule could be perpetuated in parallel with stories telling about pagan stories and images.

Key words - café, Grigor Magistros, Zakaria Gnunetsi, folk poem, native, Frick, History of the Copper City, Christian morality

АННА СТЕПАНИЯН - ПРОБЛЕМА АВТОРСКОЙ ПОЗИЦИИ В АРМЯНСКИХ СРЕДНЕВЕКОВЫХ КАФА - Резюме Одним из поэтических видов, применяемых в средневековой армянской лирике, является Кафа, созданная в 10-ом веке, достигла художественного развития в 13-ом веке и использовалась до 16-

го века. Авторы армянских кафа являются Фрик, Хачатур Кечареци, Григорис Ахтамарци, Закария Гнунэци, Овасап Себастаци. Центральная тема работ авторов кафа - это жизнь в самых разных проявлениях, борьба за светскую жизнь, принесенные ею широкие импульсы, проблемы средневекового человека-богословские, философские. И эти проявления представлены индивидуально-творческими авторскими и принятыми на данном этапе жанровыми характерами. Армянские писатели кафа очень часто свободным выбором определяли, деятельность какого евангельского образа можно представить с данной историей, какое священное правило можно преподавать параллельно с историями, рассказывающими о языческих историях и образах.

Ключевые слова: кафа, Григор Магистр, Закария Гнунэци, народная поэма, айрен (армянский стих), Фрик, История Медного города, христианская мораль

REFERENCES

1. A. Mnacakanyan, Haykakan mijnadaryan joghovrdakan erger, Erevan, 1956.
2. A. Tevkanc, Hayerg, Thiflis, 1882.
3. B. Chugaszyan, Friky parskeren qaryaki targmanich, "Banber Matenadaran", Erevan, 1958, N 4.
4. G. Hovsepean, Grigoris Aghthamarci (Grakan-kensagrakan nor nyuterov), "Ararat", TsB tari, Hunuar-dektember, S. Edjmiatsin, 1919.
5. Garegin Hovsepean, Hovasap Sebastaci, "Ararat", S. Ejmiatsin, 1918, Ts Atari, April-dektember, hamar D-JB.
6. H. Simonyan, Hay mijnadaryan kafaner, Erevan, 1975.
7. Khachatur Kechareci, Tagher, ashkhatasirutyamb` Aelita Dolukhanyani, Erevan, 1988.
8. Taghasacutyung Grigori Magistrosi Pahlavunvo, I Venetik, I Surb Ghazar, 1868.
9. A. Hovhannisyan, Friky patmaqnnakan luysi tak, Erevan, 1955.
10. Hovasap Sebastaci, Banasteghtsutyunner, Ashchatasirutyamb` V. Gevorgyani, Erevan, 1964.
11. Mesrop Mashtoci anvan Matenadaran, dzeragir N 723:
12. N. Andranikyan, Azgayin veperen. 1-Pghndze qaghaqy, 2-Farmani Asmani, 3-Harcmunq aghjkan, "Bazmavep", Venetik, 1906, N7.
13. Patmutyun Farman mankann (Mijnadaryan poem), hratarakutyun patrastec` Shushanik Nazaryan, Erevan, 1957.
14. Zaqaria episkopos Gnuneac ev yur taghery, usumnasirec ev hratarakec H. Nerses Akinean, Vienna, 1910.